Արձանագրություն N 3
<< ՀՀ ՎԿ-ԳՀԱՊՁԲ-2019/8>> ծածկագրով ընթացակարգի
գնահատման արդյունքների հաստատման նիստի

ք. Երևան

07 հունիսի, 2019թ.
ժամը՝ 15:00

Մասնակցում էին՝

Գնահատող հանձնաժողովի նախագահ
/ԳՊ/ԳԱՊ/՝ Ա. Մարտիրոսյան

Հանձնաժողովի անդամներ
/ԳՊ/ԳԱ/՝ Ա. Շահինյան
/ԳՊ/ԳԱ/՝ Ա. Քյոսեյան

Քարտուղար՝ /ԳՊ/Միմ/՝ Լ. Ադամյան

1. <<ՀՀ ՎԿ-ԳՀԱՊՁԲ-2019/8>> ծածկագրով մրցույթի գնահատող հանձնաժողովը արձանագրեց, որ ՀՀ ՊԵԿ-ի կողմից տրամադրված տեղեկատվությունից պարզ է դարձել, որ <<Նորմա-պլյուս>> ՍՊԸ –ն, <<Ստարտկոպի>> ՍՊԸ -ն, <<Պատրոն ՌՄ>> ՍՊԸ -ն, <<Էմ Սի Էս Կովկաս>> ՍՊԸ ն, <<ՄՈՎՍԵՍՅԱՆ>> ՍՊԸ -ն, <<ՍՄԱՐԹՎԵՅՎ>> ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորություններ չունեն, իսկ <<ՏԵՎՆ>> ՍՊԸ-ն ունի հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորություններ 2000 ՀՀ դրամի չափով, որը գերազանցում է 6-րդ չափաբաժնի մասով ներկայացված գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը: Հանձնաժողովը որոշեց մերժել <<ՏԵՎՆ>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնային առաջարկը և 6-րդ չափաբաժնի մասով ընթացակարգը հայտարարել չկայացած՝ հաջորդաբար տեղ զբաղեցնող մասնակիցներ չլինելու պատճառով:

2. Հանձնաժողովն արձանագրեց, որ <<ՍՄԱՐԹՎԵՅՎ>> ՍՊԸ-ի կողմից 27-րդ չափաբաժնի մասով ներկայացված ապրանքի ամբողջական նկարագիրը թերի է, որը կազմակերպության կողմից օրենսդրությամբ սահմանված ժամկետում կատարվել է անհրաժեշտ շտկումները:

3. Հանձնաժողովը գնահատեց առաջին տեղ զբաղեցրած մասնակիցների կողմից ներկայացված հայտերը, որի արդյունքները արտացոլված են գնահատման թերթիկներում:

4.Գնահատման արդյունքում հանձնաժողովը որոշեց ընտրված մասնակիցներ ճանաչել <<Նորմա-պլյուս>> ՍՊԸ -ին՝ 1, 2, 8, 12, 15, 19, 29 չափաբաժինների մասով, <<Ստարտկոպի>> ՍՊԸ -ին՝ 3, 16, 18, 38 չափաբաժինների մասով, <<Պատրոն ՌՄ>> ՍՊԸ -ին՝ 4, 5, 9, 10, 13, 14, 35, 36 չափաբաժինների մասով, <<Էմ Սի Էս Կովկաս>> ՍՊԸ -ին՝ 22, 23, 34 չափաբաժինների մասով, <<ՄՈՎՍԵՍՅԱՆ>> ՍՊԸ -ին՝ 25 չափաբաժնի մասով, <<ՍՄԱՐԹՎԵՅՎ>> ՍՊԸ -ին՝ 27 չափաբաժնի մասով և առաջարկել կնքել գնման պայմանագրեր:

5. <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ անգործության ժամկետ է սահմանվում պայմանագրեր կնքելու որոշման մասին հայտարարությունը

հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 5-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

6. Ընտրված մասնակիցների հետ գնման պայմանագրերը կնքվելու են անգործության ժամկետի ավարտից հետո, օրենսդրությամբ սահմանված կարգով:

Հանձնաժողովի
Նախագահ՝ ԳՊ/ԳԱՊ _____ Ա. Մարտիրոսյան

Անդամներ՝ ԳՊ/ԳԱ _____ Ա. Շահինյան

_____ Ա. Քյոսեյան

Քարտուղար՝ ԳՊ/ՄԻՄ _____ Լ. Ադամյան